# ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ 2016Թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 29-ԻՑ 30-Ը Ք.ԵՐԵՎԱՆՈՒՄ ԿԱՅԱՆԱԼԻՔ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ԵՐԿՐՆԵՐԻ ՄԱՔՍԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻԱՎՈՐՎԱԾ ԿՈԼԵԳԻԱՅԻ 21-ՐԴ ՆԻՍՏԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

**N « ՀՀ ԿԱ ՊԵԿ-ԲԸԱՀԾՁԲ-11-16/17»**

**ք. Երևան** **«25» նոյեմբերի 2016թ.**

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն, ի դեմս ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար Ա.Պավլովի, որը գործում է Կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Հյուր Սերվիս» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ա.Հակոբյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար 2016թ. նոյեմբերի 29-ից 30-ը ք.Երևանում կայանալիք Մաքսային միության անդամ երկրների մաքսային ծառայությունների միավորված կոլեգիայի 21-րդ նիստի շրջանակում պաշտոնական պատվիրակությունների ընդունման հետ կապված ներկայացուցչական ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ավարտի օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (Հավելված N 3) և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 3.1):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 30 օրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը կազմում է 6 601 500 (վեց միլիոն վեց հարյուր մեկ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ծառայության դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 25-ը դեկտեմբերի 2016թ.:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Արգելվում է սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող Ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.4 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով

1) Կատարողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխման դեպքում Կատարողը գրավոր տեղեկացնում է Պատվիրատուին՝ տրամադրելով գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հաշված հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

7.5 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում կոնսորցիումի հետ Պատվիրատուի կնքած պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

7.6 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է պայմանագիր կնքած անձի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.7 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.8 Սույն պայմանագիրը կազմված է 10 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.9 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.10 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե | «Հյուրս Սերվիս» ՍՊԸ |
| ք. Երևան, Մովսես Խորենացու 3 | Ք.Երևան, Նալբանդյան 96-2 |
| ՀՎՀՀ 02647057 | ԱԿԲԱ Կրեդիտ Ագրիկոլ բանկ ՓԲԸ |
| Հ/Հ 900013202016 | Հ/Հ 220553331244000 |
| Հ/Հ 900013574018 | ՀՎՀՀ 00073368 |
| ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն | Տնօրեն՝ |
| ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի ղեկավարի տեղակալ | |
| Ա.Պավլովի _____ (ստորագրություն)Կ.Տ | Ա.Հակոբյան _____ (ստորագրություն)Կ.Տ |

*Հավելված 1*

*կնքված N ՀՀ ԿԱ ՊԵԿ-ԲԸԱՀԾՁԲ-11-16/17*

*ծածկագրով գնման պայմանագրի*
*«25» «նոյեմբերի» 2016 թ.*

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| | Ծառայություն* | | | |
|---|---|---|---|---|
| Հ/հ | **անվանումը** | **տեխնիկական բնութագիրը** | **Մատուցմանման ժամկետը և վայրը** | **Վճարման պայմանները** |
| 1 | Պաշտոնական պատվիրակությունների ընդունման հետ կապված ներկայացուցչական ծառայություններ | «Զվարթնոց» օդանավակայանում պաշտոնական ընդունելությունների սրահով հյուրերի դիմավորման և ճանապարհման համար վճարումների իրականացում՝ **առավելագույնը 45 անձի համար** | **Ժամկետ՝** 2016թ. նոյեմբերի 27-ից դեկտեմբերի 1-ը ընկած ժամանակահատվածում | Վճարումը կիրականացվի ծառայությունը մատուցելուց և վճարման փաստաթղթերը Կատարողի կողմից ներկայացնելուց հետո 20 բանկային օրվա ընթացքում: |
| 2 | | **Տրանսպորտային ծառայություններ:** Տարբեր չվերթներով ժամանող և մեկնող հյուրերի տեղափոխում Զվարթնոց օդանավակայանից դեպի «Ծաղկաձոր Մարիոթ հյուրանոց» և հակառակը, այցելություններ տեսարժան վայրեր, հյուրանոցից տեղափոխում հանդիպումների վայրեր և հակառակը, այցելության ողջ ժամանակահատվածում տրանսպորտային ծառայություններ ապահովում: 6 հատ միկրոավտոբուս, յուրաքանչյուրը առնվազն 10 տեղանի | **Ժամկետ՝** 2016թ. նոյեմբերի 27-ից դեկտեմբերի 1-ը ընկած ժամանակահատվածում | Վճարումը կիրականացվի ծառայությունը մատուցելուց և վճարման փաստաթղթերը Կատարողի կողմից ներկայացնելուց հետո 20 բանկային օրվա ընթացքում: |
| 3 | | **Հյուրանոցային համարների ամրագրում** ՝ 4 անձի համար | **Ժամկետ՝** 2016թ. նոյեմբերի 28-ից 30-ը<br>Վայրը՝ «Ծաղկաձոր Մարիոթ հյուրանոց» (ք. Ծաղկաձոր, Տանձաղբյուրի փ. 2, 4/1 | Վճարումը կիրականացվի ծառայությունը մատուցելուց և վճարման փաստաթղթերը Կատարողի կողմից ներկայացնելուց հետո 20 բանկային օրվա ընթացքում: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 4 | | **Էքսկուրսիաների կազմակերպում՝** - Էքսկուրսավարի ուղեկցությամբ խմբային այցելություններ Հայաստանի տեսարժան վայրեր.<br>**1.** Կեչառիս վանքային համալիր Խմբերի քանակը՝ 2, յուրաքանչյուրը բաղկացած 20 անձից:<br>**2.** Ծաղկաձորում ճոպանուղով զբոսանքի կազմակերպում (29.11.2016թ, խումբ՝ 45 անձ)<br>**3.** Օրբելի եղբայրների տուն-թանգարան,Խմբերի քանակը՝ 2, յուրաքանչյուրը բաղկացած 20 անձից:<br>**4.** Թումո ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոն<br>Խմբերի քանակը՝ 2, յուրաքանչյուրը բաղկացած 20 անձից:<br>*5.* Գառնի-Գեղարդ այցելության կազմակերպում (29.11.2016թ, խումբ՝ 25 անձ)<br>Հուշարձանների/թանգարանների մուտքի վարձը հոգում է կատարողը: Էքսկուրսիան պետք է վարվի ռուսերենով: | **Ժամկետ՝**<br>1. 2016թ. նոյեմբերի նոյեմբերի 28-ից 29-ը ընկած ժամանակահատվածում: | Վճարումը կիրականացվի ծառայությունը մատուցելուց և վճարման փաստաթղթերը Կատարողի կողմից ներկայացնելուց հետո 20 բանկային օրվա ընթացքում: |
| 5 | | **Հուշանվերների տրամադրում՝ 45 հատ (4 ղեկավարի և 41 պատվիրակության անդամների համար)** (Հուշանվերները պետք է նվիրված լինեն Հայաստանին՝ դրա միջազգայնորեն ճանաչելի մշակութային խորհրդանիշ(ներ)ին: «Armenia» բառի գրառման առկայությունը ոչ պարտադիր, սակայն ցանկալի է):<br>Հուշանվերը պետք է կրի նախևառաջ մշակութային բեռ (կիրառականությունը պակաս կարևոր է)՝ հարմար լինելով օտարերկրյա պաշտոնատար անձին նվիրելու համար:Հուշանվերը չպետք է բնորոշվի միջազգային օդային փոխադրման համար անհարմարավետ հատկանիշներով՝ մեծ չափեր, ծանր քաշ, արագ վնասվող, փխրուն նյութ, փաթեթավորման բացակայություն, հեղուկի պարունակություն, արտահանման համար սահմանափակում և այլն: | **Ժամկետ՝** մինչև 2016թ. նոյեմբերի 27-ը,<br>Վայր՝ ք. Երևան, Մ.Խորենացի 3 | Վճարումը կիրականացվի ծառայությունը մատուցելուց և վճարման փաստաթղթերը Կատարողի կողմից ներկայացնելուց հետո 20 բանկային օրվա ընթացքում: |
| 6 | | **Պաշտոնական պատվիրակության անդամների սննդի ապահովում** `<br>Ք.Ծաղկաձոր,«Բուրմունք» ռեստորան առավելագույնը 30 հոգի<br>Ք.Երևան,«Ծիրանի» ռեստորանային համալիր առավելագույնը 55 հոգի<br>Ք.Գառնիում առավելագույնը 30 հոգի : | **Ժամկետ՝**<br>.Ծաղկաձոր,«Բուրմունք» ռեստորան -28.11.2016թ.<br>Ք.Երևան,«Ծիրանի» ռեստորանային համալիր 30.11.2016թ.<br>Ք.Գառնիում 29.11.2016թ. | Վճարումը կիրականացվի ծառայությունը մատուցելուց և վճարման փաստաթղթերը Կատարողի կողմից ներկայացնելուց հետո 20 բանկային օրվա ընթացքում |
| 7 | | **Պաշտոնական ընթրիքի կազմակերպում՝** «Ծաղկաձոր Մարիոթ» հյուրանոցի հանդիսությունների սրահում<br>առավելագույնը 60 հոգի: | **Ժամկետ՝**<br>2016թ. նոյեմբերի 29 | Վճարումը կիրականացվի ծառայությունը մատուցելուց և վճարման փաստաթղթերը Կատարողի կողմից ներկայացնելուց հետո 20 բանկային օրվա ընթացքում |
| 8 | | **Գրասենյակային նյութեր,** այդ թվում<br>Թղթապանակներ թղթյա՝ /XXI ЗАСЕДАНИЕ ОБЪЕДИНЕННОЙ КОЛЛЕГИИ ТАМОЖЕННЫХ СЛУЖБ ГОСУДАРСТВ-ЧЛЕНОВ ТАМОЖЕННОГО СОЮЗА/ Գրառմամբ – 50 հատ<br>Նոթատետր A5 չափի՝ /նիստի անվամբ / - 50 հատ<br>Գրիչներ /նիստի անվանմամբ / - 50 հատ<br>Պատվիրակների անվանումներով գունավոր թուղթ ցուցանակների մեջ տեղադրելու համար– 50 հատ,<br>Հուշանվերների համար նախատեսված տոպրակներ – 50 հատ | Մինչև նոյեմբերի 26, 2016թ.<br>Առաքման հասցե՝ Խորենացի 3, Երևան | Վճարումը կիրականացվի ծառայությունը մատուցելուց և վճարման փաստաթղթերը Կատարողի կողմից ներկայացնելուց հետո 20 բանկային օրվա ընթացքում |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 9 | | Նոթբուքի վարձակալություն - 2 հատ<br>Մոնոխրոմ տպիչի վարձակալություն – 1 հատ<br>Բազմաֆունկցիոնալ սարքի (3-ը 1-ում) վարձակալություն - 1 հատ | Մինչև նոյեմբերի 27, 2016թ.<br>Առաքման հասցե՝ Խորենացի 3,Երևան | Վճարումը կիրականացվի ծառայությունը մատուցելուց և վճարման փաստաթղթերը Կատարողի կողմից ներկայացնելուց հետո 20 բանկային օրվա ընթացքում |
| | | ***Դահլիճի վարձակալություն՝***<br>Ծաղկաձորի «Էլեգանտ» հյուրանոցի նիստերի դահլիճ (30 հոգու համար)<br>Ծաղկաձորի «Մարիոթ» հյուրանոցի նիստերի դահլիճ (55 հոգու համար), դահլիճը պետք է ձևավորված լինի ծաղկեփնջով | ***Ժամկետ՝*** Ծաղկաձորի «Էլեգանտ» հյուրանոց 29.11.2016թ.<br>***Ժամկետ՝*** Ծաղկաձորի Մարիոթ» հյուրանոց 30.11.2016թ. | Վճարումը կիրականացվի ծառայությունը մատուցելուց և վճարման փաստաթղթերը Կատարողի կողմից ներկայացնելուց հետո 20 բանկային օրվա ընթացքում |
| | | Պաստառի (7մX3մ) պատրաստում, մոնտաժում, հենքերի տեղադրում | Մինչև նոյեմբերի 27, 2016թ.<br>Առաքման հասցե՝ Խորենացի 3,Երևան | Վճարումը կիրականացվի ծառայությունը մատուցելուց և վճարման փաստաթղթերը Կատարողի կողմից ներկայացնելուց հետո 20 բանկային օրվա ընթացքում |

**Գնումն իրականացնելիս հիմք է ընդունվում ՀՀ կառավարության 10.09.2009թ.N 1036-Ն որոշումը:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե
ք. Երևան, Մովսես Խորենացու 3
ՀՎՀՀ 02647057
Հ/Հ 900013202016
Հ/Հ 900013574018
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի
աշխատակազմի ղեկավար՝

Ա.Պավլովի _____ (ստորագրություն) Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**
«Հյուրս Սերվիս» ՍՊԸ
Ք.Երևան, Նալբանդյան 96-2
ԱԿԲԱ Կրեդիտ Ագրիկոլ բանկ ՓԲԸ
Հ/Հ 220553331244000
ՀՎՀՀ 00073368
Տնօրեն՝

Ա.Հակոբյան _____ (ստորագրություն) Կ.Տ.

*Հավելված 2*

*«25» նոյեմբերի 2016 թ կնքված*

*N ՀՀ ԿԱ ՊԵԿ-ԲԸԱՀԾՁԲ-11-16/17*

*ծածկագրով գնման պայմանագրի*

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

**ՀՀ դրամ**

| Հ/Հ | Բյուջետային ծախսերի տնտ. դասակ. հոդվածը* | Ծառայության անվանումը | Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ ԿԱ ՊԵԿ 2016թ. արտաբյուջետային միջոցներով նախատեսված հատկացումների հաշվին, ըստ ամիսների՝ ընդ որում | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Հունվար | Փետրվար | Մարտ | Ապրիլ | Մայիս | Հունիս | Հուլիս | Օգոստոս | Սեպտեմբեր | Հոկտեմբեր | Նոյեմբեր | 25-ը դեկտեմբերի մինչև 2016 թ. | **Տարի ընդամենը** |
| 1 | 4237 | **Պաշտոնական պատվիրակության ընդունման հետ կապված ներկայացուցչական ծառայություններ** | | | | | | | | | | | | **6 601 500** | **6 601 500** |

* Վճարման ենթակա գումարները ներկայացված են ամբողջական կարգով

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե
Ք. Երևան, Մովսես Խորենացու 3
ՀՎՀՀ 02647057
Հ/Հ 900013202016
Հ/Հ 900013574018
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի
աշխատակազմի ղեկավարի տ/պ

**Ա.Պավլովի**

(ստորագրություն)Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**
«Հյուրս Սերվիս» ՍՊԸ
Ք.Երևան, Նալբանդյան 96-2
ԱԿԲԱ Կրեդիտ Ագրիկոլ բանկ ՓԲԸ
Հ/Հ 220553331244000
ՀՎՀՀ 00073368
Տնօրեն՝

**Ա.Հակոբյան**

(ստորագրություն)Կ.Տ

*Հավելված 3*
*«25» նոյեմբերի 2016 թ. Կնքված*
*N «ՀՀ ԿԱ ՊԵԿ-ԲԸԱՀԾՁԲ-11-16/17»*
*ծածկագրով գնման պայմանագրի*

Պայմանագրի կողմ

_____

_____

գտնվելու վայրը _____
հհ _____

_____

հվհհ _____

Պատվիրատու

_____

_____

գտնվելու վայրը _____
հհ_____

_____

հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«  » «  » 20  թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
*Պատվիրատուն՝ ի դեմս* _____ *և*
*Պայմանագրի կողմը՝ ի դեմս*_____, *հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին. Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝*

| N | Մատուցված ծառայությունների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն

Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն

Կ.Տ.

*Հավելված 3.1*
*«25» նոյեմբերի 2016 թ.*
*կնքված N «ՀՀ ԿԱ ՊԵԿ-ԲԸԱՀԾՁԲ-11-16/17»*
*ծածկագրով գնման պայմանագրի*

# ԱԿՏ N

**պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ**

Սույնով արձանագրվում է, որ ----------ի (այսուհետ՝ Պատվիրատու) և
(Պատվիրատուի անունը)
----------ի (այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ------- -ին կնքված N ----------
(Կատարողի անունը)
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. ---------- -- -ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

| Ծառայության | | |
|---|---|---|
| **Անվանումը** | **Քանակական ցուցանիշը (փաստացի)** | **Չափի միավորը** |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն